



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### **Կայուն զարգացման առնչվող՝ Լիդիան ընկերության պարտավորությունը**

Լիդիան Ինթերնեյշնլ և իր վերահսկվող դուստր ձեռնարկությունները («Ընկերություն» կամ «Լիդիան») ձգտում են կայուն զարգացման<sup>1</sup> արդյունքների և պարտավորվում ծրագրերի զարգացման և շահագործման բոլոր փուլերում և ընթացակարգերում ներառել բնապահպանական, առողջության, անվտանգության և սոցիալական խնդիրները:

Որպես այդ հանձնառության մաս, Լիդիանը մշակել է սոցիալական, բնապահպանական, առողջության և անվտանգության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների քաղաքականություններ:

### **Ընկերության աշխատանքի հիգիենայի և անվտանգության քաղաքականություն**

Լիդիան ընկերությունը պարտավորվում է իրականացնել աշխատանքի հիգիենայի և անվտանգության համապարփակ քաղաքականություն և երաշխավորել, որ այս քաղաքականությունը հայտնի դառնա ընկերության մենեջերներին, աշխատակիցներին, կապալառուներին և գործընկերներին, ինչպես նաև արդյունավետորեն իրականացվի, վերանայվի և թարմացվի: Մեզ համար մարդիկ կարևոր ռեսուրս են և մեր նպատակն է չունենալ աշխատունակության կորստով վնասվածքներ և մահվան դեպքեր: Համոզված ենք, որ բոլոր դժբախտ պատահարներն էլ հնարավոր է կանխարգելել, և մեր բոլոր աշխատակիցները, կապալառուները, ենթակապալառուներն ու այցելուները անվտանգ տուն կվերադառնան:

Աշխատանքի հիգիենայի և անվտանգության քաղաքականությունը տարածվում է բոլոր աշխատակիցների, ժամանակավոր աշխատողների, կապալառուների, հանրության այն ներկայացուցիչներին, որոնք Ընկերության իրականացրած աշխատանքների հետևանքով կարող են կրել կամ կրում են ազդեցություն: Ընկերության այս քաղաքականությունն ուղղված է հնարավորության սահմաններում ապահով և առողջության համար վտանգ չներկայացնող աշխատանքային միջավայրի ստեղծմանն ու պահպանմանը: Լիդիան ընկերության նպատակն է նաև առողջության ու անվտանգության արդյունավետ կառավարման շնորհիվ ապահովել «գրոյական վնաս»: Սա ներառում է հետևյալ պայմանների ապահովումը՝

- Անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների ապահովում
- Աշխատանքի անվտանգ համակարգերի մշակման, նախագծման և ապահովման կազմակերպում
- Պատշաճ կերպով սպասարկվող և պահպանվող մեխանիզմ
- Ընկերության գործունեությանը վերաբերող տեղեկատվության տրամադրում, հրահանգավորում, վերապատրաստում և վերահսկողություն
- Արտակարգ իրավիճակների ընթացակարգերի իրագործում - տարհանում հրդեհի կամ այլ մեծ պատահարի դեպքում
- Ընկերության աշխատակիցների հետ առողջության և անվտանգության առօրյա պայմանների վերաբերյալ խորհրդակցությունների կազմակերպում, ինչպես նաև աշխատանքի հիգիենայի և դրա վերահսկման մասին տեղեկությունների տրամադրում:

Ընկերությունն իր բոլոր աշխատակիցներից պահանջում է իմանալ աշխատանքի հիգիենայի և անվտանգության վերաբերյալ իրենց պարտականությունները և պահպանել իրենց գործունեությանն առնչվող առողջության և անվտանգության բոլոր պահանջները, ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով՝

- Հետամուտ լինել սահմանված տեխնիկական պահանջներին, ուղեցույցներին և հրահանգներին
- Անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքային ժամերին միշտ կրել անհատական պաշտպանիչ միջոցներ

<sup>1</sup> «Գործընթաց, որտեղ հաշվի են առնվում ներկայիս պահանջները՝ չզրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից:»

- Ընկերության ընթացակարգի համաձայն՝ ժամանակին զեկուցել բոլոր միջադեպերի, պատահարների և վտանգների մասին
- Առանց առողջությանն ու անվտանգությանը վերաբերող ասպեկտները հաշվի առնելու չսկսել որևէ հանձնարարության կատարումը
- Չգնալ ավելորդ ռիսկի, որը կարող է ազդել նրանց կամ ցանկացած այլ անձի առողջության կամ ինքնագագացողության վրա
- Անվտանգության պահանջների վերաբերյալ ոչ վստահ լինելու դեպքում՝ հարցնել իրենց ղեկավարին:

Աշխատանքի հիգիենայի և անվտանգության առաջնային խնդիրները և մտահոգությունները թափանցիկ, միահամուռ ուժերով, բաց և կառուցողական եղանակով կարգավորելու նպատակով՝ Ընկերությունը կհամագործակցի վերահսկող մարմինների և այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում Ծրագրի ազդակիր համայնքների հետ:

Կայուն զարգացման արդյունքների՝ իր հանձնառության շրջանակներում Լիդիան ընկերությունը բավարար ռեսուրսներ կներդնի իր յուրաքանչյուր աշխատանքների նախագծման, կառուցման, շահագործման և փակման ընթացքում աշխատանքի հիգիենայի և անվտանգության իր պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Նշված պարտավորությունները կարտացոլեն ձկուն կառավարման գործընթացի արդյունքները և մեղմացման մեխանիզմի պատշաճ կիրառումը, որտեղ շեշտը դրվում է տեղում բացասական ազդեցությունից խուսափելու, ինչպես նաև ռիսկերը վերահսկելու ուղղությամբ վերապատրաստելու վրա:

### ***Համապատասխանություն***

Ընկերությունն իր գործունեությունը կնախագծի և կիրականացնի իր գործունեության ոլորտին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան տեղական և պետական օրենքների ու կանոնակարգի համաձայն՝ միաժամանակ հետևելով Համաշխարհային բանկի խմբի/Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Չարգացման և Վերակառուցման Եվրոպական Բանկի պահանջներին: Լիդիանը իր խորհրդատուներից, կապալառուներից, մատակարարներից և դուստր ձեռնարկություններից պահանջում է ընդունել աշխատանքի հիգիենայի և անվտանգության այս քաղաքականության սկզբունքները, որպես նվազագույն չափանիշ: Այս նվազագույն պահանջից բացի Ընկերությունը կարող է որոշել կամավոր պարտավորություններ վերցնել՝ ավելի խիստ պահանջներ կատարելու համար:

### ***Շարունակական բարելավում***

Ընկերությունը պարբերաբար կվերանայի աշխատանքի հիգիենայի և անվտանգության իր քաղաքականությունը և անհրաժեշտության դեպքում այն կթարմացվի: Ընկերությունը պարբերաբար կթարմացնի կամ կբարելավի նաև իր բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը՝ առողջությունն ու անվտանգությունը ներառյալ՝ կատարելով աշխատանքի առողջության և անվտանգության պարբերական, համակարգված, ներքին աուդիտ: Այն աուդիտի արդյունքները կօգտագործի որպես հիմք՝ ավելի ձկուն կառավարման գործընթացի միջոցով բնապահպանական գործունեության շարունակական բարելավման համար:

### ***Տեղեկատվության ապահովում և իրազեկվածություն***

Ընկերությունն իր աշխատակիցներին, կապալառուներին և մատակարարներին կփոխանցի սույն քաղաքականությունը՝ Ընկերության պարտավորությունների և պարտականությունների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը ապահովելու նպատակով: Ընկերությունը անձնակազմի համար կանցկացնի վերապատրաստման դասընթացներ քաղաքականության պահանջների վերաբերյալ իրազեկմանը և դրանց ճիշտ կիրառմանը նպաստելու նպատակով: Լիդիանը իր կապալառուներից ակնկալում է նման միջոցառումների կիրառում:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2016թ. օգոստոսի 17-ին: